


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Պաշտոնային Գաւառաց 2 1/2 իրա
Վեցամս. Կ. Պոլսոյ հմր. 5 Մէճ.
Պաշտոնային Գաւառաց 1 1/2 իրա
Օտար երկիրներու հմր. 50 իրա
Պաշտոնային տողը մէկ անգամի հա-
մար 3 զուգուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼԵՐԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած քաղաքացիներու
ծախքը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն Խմբագրի
— Տնօրէնին ախտի ուղղութիւն, Գաւա-
թի Ստանդարտը Զտաւարի թիւ
198, Նորոյ խան, Ստանդարտներ
եւկը :
Հանրա ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԽԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եղիպտական խնդիրը դիւանա-
դիւանութեան գլխաւոր զբաղմունքն
եղած է տակաւին : Ինչպէս արդէն
ժամուրդած էինք, Անգլիոյ և Գաղ-
ղիա հաւանութիւն չէին տար Բ. Դը-
րան 1873 ին առ խափն տուած Ֆէր-
մանը ջնջելուն, և իրենց այս որոշ-
ման մէջ կը յարատեւեն : Իսկ Բ. Դը-
րան արդէն զայն բարձեալ կը հա-
մարի : Բայց այս խնդիրը կրնայ կար-
գադրուիլ առանց ծանր դժուարու-
թեանց և նոր խափն նոր Ֆէրման
մը չնորհուրով, որոյ պարունակու-
թիւնը տեղութեանց ընդունելի լի-
նի : Նախորդ խափն բարձր. Իսմա-
յիլ փաշան Նաբոյի գնաց, ուր դուշ-
քիչ մը ժամանակ մնայ՝ մինչև որ
վերջնապէս որոշէ թէ ո՞ր պէտք է
հաստատէ իւր բնակութիւնը : Նոր
խափն բարձր. Թէվֆիք փաշան Եւ-
րոպական դատարարութիւն առած
է, և տեղութիւններն իրեն համակ-
րութիւն կը ցուցնէին : տարակոյս չը
կայ որ Եղիպտոս վերակազմուելով
կրնայ իւր պարտուց մեծ մասն հա-
տուցանել տեղութեանց հետ համա-
ձայնութեամբ և պարտաւէրները գոհ
ընելով : Թայմը լրագիրն իւր մէջ յօդ-
ւածին մէջ ըսած էր թէ խափն իւր
ասպարիզին ամենէն չուայ ժամանակն
իրեն խորհրդական ունէր Նուսրի
փաշան : Պ. Տիսէ անուն անգլիացի
մը՝ յիշեալ թերթին նամակ մը գըրե-
լով՝ այս կարծիքը կողոզէ : Անտարա-
կոյս Նուսրի փաշան նախարար էր,
կրնէ, երբ Եղիպտոսի գլխաւոր պարտ-
քը դիտուեցաւ, բայց երկուական վար-
չութեան մէջ նա մասն չունէր : Իս-
մայիլ փաշան երկուսից քսակն իւր
ձեռքն առած էր, ուրիշ խնդիրներն
իւր Հայ նախարարին բարձրագոյն
խելքին թողով : Նուսրի փաշան այս
կերպիւ իւր ձեռքն ունեցած իշխա-
նութիւնն ի գործ դրաւ տասնեւից
տարի յօդուտ Եղիպտոսի իրական
բարենորոգմանց : Իսմայիլ փաշային
ամենէն կարեւոր գործառնութեանց
մէջ Նուսրի փաշան իրեն օգնած և
ժառանգութիւն մատուցած էր : Նու-
սրի փաշան Սուէի ջրանցքին պատ-
ճառաւ Եղիպտոսի վրայ բացառիկ
կերպիւ Գաղղիական պաշտպանու-
թիւն հաստատուելուն առաջին առաւ,
միջազգային դատարաններ հաստա-
տեց հիւպատոսաց արտօնութեանց
տեղ : Իսկ իւր վերջին նախարարու-
թեան միջոցին Նուսրի փաշան Պ.
Ռիվըր վիլիքին գործակցութեամբ
խափն անձնական կալուածները պե-
տութեան վերադարձուցած էր : Եւ-
րոպացի մանաւանդ Անգլիացի պաշ-

տօնաւարաց միջոցաւ զԵղիպտոս վե-
րակազմուելու դադարաւոր Նուսրի փա-
շան զոյցած էր : Բայց իսմայիլ փա-
շան չուզելով իւր ինքնիշխանութիւն-
նը թողուլ, իւր նախարարը ծանրած
էր և անոր դադարաւոր չէր կրցած
գործադրել :
Նուսրի փաշան Եւրոպական աշ-
խարհավարութիւնը լաւ դիտարկով
համոզուած է թէ Եղիպտոս չկրնար
բացարձակապէս անկախ պետութիւն
մը լինիլ, այլ իւր գաղափարն է զայն
Ափրիկեան Պէրճիք մ'ընել, ինքնա-
կառավարութեան հիմանց վրայ, ընդ-
պաշտպանութեամբ Արեւմտեան տե-
րութեանց, և մանաւանդ Անգլիոյ,
արտաքին յարձակումներու դէմ,
քանզի Անգլիա ամենէն աւելի շահ
ունի որ Սուէի ջրանցքն օտար մի-
ջամտութեան բարձրովն ազատ լինի :
Թէպէտ այս աշխարհավարութեան
գործադրութիւնը կրնայ կասկածելի
լինիլ, այսու ամենայնիւ Եղիպտական
տեսակետով հայրենասիրական է, և
պետական մարդու արժանի : Պ. Տի-
սէ կը զբաղեցնէ թէ Եղիպտոսի եւ-
րոպական և վարչական դժուարեցի-
կներակազմութեան համար պէտք է
որ իսմայիլ փաշան հրաժարի և մեկ-
նի, որպէս զի ոչ ևս կարենայ աղբ-
յութիւն բանեցնել իւր բացարձակ
իշխան, Նուսրի փաշան պաշտօնի
դառնայ, և Եղիպտական վարչու-
թեան մէջ Եւրոպական տարրը վե-
րահաստատի : Այս ծրագրին ամենէն
կարեւոր կէտը գործադրեցաւ : Իսմա-
յիլ փաշան հրաժարելով Եղիպտոսին
մեկնեցաւ, ինչպէս մեկնած էին Նու-
սրի փաշան և Եւրոպացի նախարարը :
Ինչ մեծ վիշտ այն իշխանին որ գեռ-
քանի մ'օր յառաջ Եղիպտոսի բա-
ցարձակ տէրն էր : Եւ այս մեծ ար-
գիւնքն Եւրոպական տէրութեանց
միտութեան հետեւանքն է : Այս նշանու-
տը փորձը ցոյց տուաւ թէ տեղութիւնը
կրնան եղբի իրենց նախանձընդդէմ
աշխարհավարութիւնը թողուլ յօդուտ
ընդհանուր Եւրոպական շահուց, և
այս օրինակը պէտք է աղբու խրատ
մը լինի : Եւրոպական ներդաշնակու-
թիւնը կրնար շատ կիճուտ խնդիր-
ներ լուծել, շատ արեւելահայրութեանց
և թշուառութեանց առաջին առ-
նուլ, եթէ նոյն իսկ շատ անգամ Եւ-
րոպական տէրութեանց մէջ զայն
խանդարողներ չգտնուէին :
Իսմայիլ փաշային անկումէն ետեւ
կը մնայ տեսնել թէ արդեօք Արեւ-
մտեան տէրութիւնը պիտի պահան-
ջէ որպէս զի Նուսրի փաշան և Եւ-
րոպացի նախարարը պաշտօնի վերա-
դառնան իրենց քաղաքական վար-
չական և երկրական ծրագրին ի գործ
դնելու, որ Գահրիէի մէջ պատահած
գինուորական ժողովին և անկէ ետեւ
ժողած դէպքերուն պատճառաւ
դադարեցաւ : Թայմը մէջ հրատարակ-

եալ նամակն ասոր հաւանականու-
թիւն ցոյց կուտայ, բայց տակաւին
այնպիսի լուր մը չկայ, և ինչպէս
յայտնի է, նոր խափը Շէրիֆ փաշա-
յին յանձնած է Եղիպտական նախա-
րարութիւնը կազմելու գործը :
Իսկ Նաբոյի կայսրութեան մա-
հրն Անգլիոյ մէջ ուշադրութիւնները
նորէն արթնացուց Զուլուներուն դէմ
մղուած պատերազմին վրայ :
Թայմը կը գիտէ թէ՝ հակառակ
բոլոր զոհողութեանց՝ տակաւին չը
կրնար բոլոր թէ գործողութիւնը է-
ապէս սկսած են, և դժբաղդաբար
ամենայն ինչ ցոյց կուտայ թէ այս
պատերազմը նախապէս կարծուածէն
շատ աւելի ծանր պիտի լինի :
« Ըսուած էր թէ, կաւեցնէ անգ-
ղիական լրագիրը, միայն մեծ յաղ-
թութիւն մը բաւական էր պատերազ-
մին վերջ տալու : Բայց այսօր հարկ
կը լինի հարցնել թէ ինչպէս կարե-
լի պիտի լինի այդպիսի յաղթութիւն
մը տանիլ վայրենիներու վրայ, որք
մանր հրոսակներու բաժնուած
են, մայրաքաղաք չունին զբաւու-
րիք, ոչ հաղորդակցութեան դիմեր,
զորս կարելի լինի կտրել, ոչ ալ հա-
ւաքախուժութեան, զոր կարելի լի-
նի պատերազմի սովորական կանոնաց
համեմատ զարնել և յաղթել : Անգ-
ղիա Ափրիկէի մէջ անընդունելի թըշ-
նամոյ մ'առել և կը գտնուի, որ ամեն
տեղ է և ոչ մի տեղ : և այս պատե-
րազմին վախճանն այսօր ամեն ժա-
մանակէ աւելի հեռի կերելի : »
Մական Թայմը կարծիք կը յայտ-
նէ թէ Անգլիական կառավարութիւն-
նը իւր բռնելիք միջոցին վրայ պէտք
չէ վարանի, պէտք է որ ամեն զոհո-
ղութիւն աչքն առնելով վերջ տայ այս
անխորհուրդ գործին, որոյ մէջ ձը-
ղեց զինք Բարեկրօնայ հրաժանարանին
նախորդ կառավարիչ Սըր Պարթլ Փը-
րէրի անձնական աշխարհավարութիւն-
նրն : և երկիրը, կըսէ, ուրախու-
թեամբ պիտի սղջունէ այն օրն, յո-
րում Անգլիա խաղաղութիւն պիտի
կնքէ Ափրիկէի մէջ՝ մինչև իսկ թէ և
ամենախիստ զոհողութեամբ կնքել
հարկ լինի :
Բարեկրօնայ հրաժանարանէն եկած
վերջին տեղեկութիւնը կատարելա-
պէս իրաւունք կուտան Թայմի այս
տխուր խորհրդածութեանց : Լրագրաց
հրատարակած հեռագրերուն գը-
րութիւն ամենքն ալ Նախարի (հարաւա-
յին Ափրիկէ) գաղթականութեան մէջ
տիրած սարսափին վրայ կը խօսին,
ուր ամեն ժամանակէ աւելի կը վախ-
ցուէր Զուլուներուն յարձակումէն :
Յունիս 3 ին, տեղական զօրաց
գունդ մը, որ Զուլուստանայ սահմա-
նակից Պատիւ թմերուն երկրին մէջ
բանակեալ կազմեր էր, յանկարծ
յարձակում կրեց Զուլուներու հը-

րոսակներէ մը, որք պահանջները բըռ-
նելէ ետեւ յանակալա վրաններուն
մէջ խուժեցին և նիղակի հարուած-
ներով քսանի չափ մարդ սպանեցին
ու վերադարձին : Այս դէպքն, որ
կըսուի թէ պէտք չէր տեղի ունե-
նար եթէ հակողութիւնը լաւագոյն
կերպիւ կազմեալ լինէր, մեծ ցա-
սում յառաջ բերաւ գաղթականու-
թեան մէջ :
Բարեկրօնայ հրաժանարանէն եկած
հեռագիր մը կը ծանուցանէ թէ տե-
ղական զօրքերը վերջապէս յունիս
2 ին Զուլուստան մտած են : Նիւսրը
կէթ և վրա զօրավարներուն հրաման
եղած էր որ իւրաքանչիւր 10 մղոն
տեղ յառաջ քալեն, և եթէ արդեւ-
քի չպատահին, 10 մղոն ալ հետեւալ
օրն յառաջանան :
Արաւիական խնդրոյն մէջ խա-
լից բռնած ընթացքին վրայ վիշն-
նայէն հետեւեալ տեղեկութիւնները
կը գրեն Անգլիական Տէլի Թէլեգ-
րաֆ լրագրին :
« Խալիսա երկար ժամանակէ ի-
վեր կը գործէ Արաւիոյ մէջ, և նոր
զրոյցներու նայելով՝ իւր գործակա-
նարները տակաւին փութաջանու-
թեամբ կախառնին Արաւիական ե-
րեւոյց վրայ :
Թուրքոս — Հելլենական խնդրոյն
կարգադրութեան վերաբերեալ ա-
պագայ բանակցութեանց ժամանակ
Խալիսա Յունաստանի չափազանց պո-
հանջումներուն պիտի ընդդիմանայ,
և ծրագիր մը պիտի առաջարկէ ե-
րբ, որուն համեմատ Արաւիա գործ-
նականապէս պիտի դադրի Թուրքի-
ոյ ամբողջացուցիչ մասը լինելէ և տե-
սակ մ'ընթերցեն դաւաճա լինի :
Արաւիական Խալիսոյ նկատմամբ
այնպէս պիտի լինի, ինչպէս է Պու-
ղարիս Ռուսիոյ նկատմամբ, և խա-
լիսան կառավարութիւնը կը կարծէ
հաւանականաբար թէ Բ. Դուրը տը-
րամադիր պիտի լինի աւելի այս ծը-
րագրին հաւանութիւն տալու : քան
թէ Հելլենաց պահանջումներուն վե-
ջանելու : Կը պատմեն թէ Խալիսան
կառավարութիւնը Թուրքոս — Հելլեն-
ական խնդրոյն նկատմամբ ձեռք ա-
ռած աշխարհավարութիւնը պաշտ-
պանելու համար այդ երկրին աշխար-
հացոյց քաղաքները շինել տուեր է,
որք ուրիշ տեղ գործածուող քաղ-
տէսներէն եւապէս կը տարբերին : Մա-
կայն Կ. Պոլսոյ մէջ բացուելիք բա-
նակցութեանց միջոցին Խալիսա ի-
մաստութեամբ վարուած կը լինի ե-
թէ Խալիսա բացայայտ դիրք մը չընէ,
որովհետեւ իւր գլխաւորութիւնը և
ոչ մի տեղութեան համար գաղտնիք
չլինելով, անոնց կատարումն ապահո-
վելու ջանացած ժամանակ Խալիսա ան-
հաճոյ ընդդիմութեանց կրնայ հան-
գելու : »

Փիլիպպեի մէջ հրատարակեալ յու-
նական փիլիպպե լրագիրն, յունիս 16/28
թուով հետեւեալը կը գրէ .

“ Մեր տեղական կառավարութիւն-
նը՝ նահանգին Բ. Դրան հետ թուր-
քերէն լիզիվակցութեան պաշտօնը կա-
տարելիք քարտու վարը տակաւին չան-
ւանեց .

“ Կըսուէր թէ Մեծ-Եպարքոսու-
թեան թարգմանութեան սենեկին
անդամ Հայրի Էյուպ Էֆէնտին յիշ-
եալ պաշտօնին պիտի անուանի։ Բայց
Հայրի Էյուպ Էֆէնտին, որ վերջերս
փիլիպպե եկած էր, չընդունեց այս
պաշտօնն և Կ. Պօլիս վերադարձաւ .

“ Ուստի կը կարծուի որ այս կա-
րեոր պաշտօնն հաւանականաբար
կարապետ Էֆէնտին պիտի յանձնը-
ւի, որ մեր քաղաքին բնակիչներէն
է և փիլիպպե Միւթէսարքութեան
նախորդ ընդհանուր քարտուղարն էր .
Թարգի և ձեռնհաս անձինք կը հաս-
տատեն թէ Կարապետ Էֆէնտին կա-
րող մարդ մ'է, յաջողակ և փորձա-
ռու քեթիպ մը։ Արեւելեան Բու-
մէլիի նահանգին մէջ բաւական մեծ
թուով Հայ գետնուելուն, Կարապետ
Էֆէնտինն այս բարձր պաշտօնին ան-
ւանումը նահանգիս Հայ ժողովրդը-
եան իրաւունքը գոհացնելու սկզբը-
նաւորութիւն մ'եղած կը լինի։ ”

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտրո 1 յուլիս .
Կ. Պօլիս Անգղիական լրագրաց ուղ-
ղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բ.
Դրանը Թուրքիոյ և Արեւելեան Տրիպոլի-
սի միացնելով միակ կառավարութեան մը
ներքեւ զինելու ղեկավարութիւնն ունի .

Դաշիքէ 2 յուլիս .
Հախորդ Խալիլ Խալիլ փաշան իրեն
յատկացեալ 30,000 Անգղիական ոսկի
տարեկան թոշակին կէսը թողուց .

Լոնտրո 2 յուլիս .
Թալիք լրագիրն այս աւուր թուոյն
մէջ Մահմուտ Նէպիի փաշային Ի. Կ. Պո-
լիս վերադարձին նկատմամբ յօդուած
մը հրատարակելով՝ խորհուրդ կուտայ որ
յիշեալ նախկին Մեծ-Եպարքոսին և ար-
դի Մեծ-Եպարքոս Խալիլեային փաշային
միջև մտերիմ համաձայնութիւն մը գո-
յանայ, և կըսէ թէ Թուրքիոյ մէջ ու է
յառաջդիմութիւն անհնար է՝ եթէ Սուլ-
թանն համարձակուի չարաչարակէ կա-
րող և պարկեշտ նախարարութիւն մը .

Այս առաջը հասած հետեւեալն է .

Լոնտրո 2 յուլիս .
Պէրլինէն Մօրնինի փոթի քաղաւած
հեռագիր մը կը ծանուցանէ թէ Կիպրոսի
Իերանական հիւպատոսին և տեղւոյն
Անգղիական իշխանութեանց միջև ան-
համաձայնութիւն ծագած լինելով, Գեր-
մանական կառավարութիւնն իւր հիւ-
պատոսն ևս կ'անջնդէ .

Օսմ. Բան.	11 7/8	
Փոթ.	1863	45 1/2
»	1869	41 3/8
»	1871	36
»	1872	21 1/2
»	1873	13 1/2
»	Կղ. կալ.	72 3/8
Անգլ. Բան.	93	

Օսմ. Բան.	12,10
Գաղղ. Բան.	30/0
»	82,50
»	84,70
»	50/0
»	116,70

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ .

Կ. Պոլսոյ ինայութեան անտուկին
անօրէն՝ Միւրադ Էֆէնտին իւրացի
երկրորդ աստիճան տրուեցաւ .

Իզիլպատսի Խալիլին Բ. Դրան քով
գործակաւորութիւն մը։ Արեւմտեան փա-
շան վերահաստատուեցաւ իւր պաշտօ-
նին մէջ և երեքշաբթի օրը Բ. Դու-
ռն երթալով երկար տեսակցութիւն
մ'անցեալ Մեծ-Եպարքոսին հետ .

Թուրք լրագիրք տեղու թեան բա-

լոր նահանգները զրկուելիք դատա-
կան տեսուչներուն (Մալլէյէ միւֆէթ-
թիլի), վերաբնութեան ատենից ընդ-
հանուր փաստաբաններուն, և եղեւ-
նադատ ատենից նախագահներուն
և դատակոն ու բիշ բարձրագոյն կար-
գի բաղմամբիւ պաշտօնատարաց ան-
ւանման ցուցակները կը հրատարա-
կեն։ Կառավարութիւնն այս պլը և
այլ պաշտամանց համար 150էն աւելի
դատաւոր և փաստաբան անուանած
է։ Դատական տեսուչները 20 հոգի
են՝ ունեւթեան 20 նահանգաց հա-
մար։ Ինչպէս կը յիշեն ընթերցողք,
այս տեսուչները պաշտօն ունին նա-
հանգաց դատարանները վերակազ-
մել և դատական բարենորոգմանց
դորձադրութեան հսկել։ Թէ՛ ասոնց
և թէ՛ ուրիշ դատական պաշտօնե-
րու կոչումը Հայոց անուանելը վաղը
պիտի հրատարակեմք։

Դաղղիոյ Բերտի Պօնտիէ Պանքա-
յին նախորդ անօրէն Պ. Ֆրէմլի կող-
մանէ Օսմանեան կառավարութեան
ներկայացեալ ծրագրերն հետզհետէ
մերժուեցան, և Պ. Ֆրէմլի քանի մ'օ-
րէն կը մեկնի մայրաքաղաքէս։

Ճերմեթի Հափաթի լրագիրը կը-
սէ թէ Եղիպատի նախորդ Խալիլ իս-
մայիլ փաշային հարէմը Կ. Պօլիս պի-
տի գալ և Խալիլիէն ամարանոցը պի-
տի բնակի։

Վաղըթ լրագիրն յուլիս 2 թը-
ւով Լոնտրայէն եկած Ռուսիէի հե-
ռագիր մը կը հրատարակէ, որ հե-
ռուեալ լուրերը կուտայ .

Լոնտրայի Օսմանեան գետական
Միւղլաքիւս փաշան ապահովութիւն
տուաւ լրատ Մալիսպրէի թէ Թուր-
քիա արամազիր չէ Ռուսիոյ հետ
դադանի համաձայնութիւն մը հաս-
տատելու։ Անգղիական լրագիրք իւ-
րեւ հաւանական ծանուցած էին թէ
Օսմանեան արդի նախարարութիւնն
ի մօտոյ պիտի լինայ, և այս լուրը
վերադառնալով ծանուց տուած էր Թուրքի-
ոյ Ռուսական դաշնակցութեան զը-
րոյցներու։ Բայց Միւսուլիս փաշան
յայտարարեց թէ Խալիլեային փա-
շան կը շարունակէ Սուլթանին վրա-
տահութիւնն ու համակրութիւնը
վայելել։

Միւսուլիս փաշան ծանուց Անգ-
ղիական կառավարութեան թէ Բ.
Դրանն Հիւլէնական խնդրոյն համար
պատուիրակներ կարգելու նկատ-
մամբ դեռ պահանջ կողմանէ ներկա-
յացեալ ծանուցագրին պատասխան
կը պատրաստէ, և թէ իշխեալ պատ-
ւիրակներն անուանելու համար իւր
գրած պայմանները պատասխանին
մէջ պիտի յայտնէ .

Տուներու շինութեան վերաբեր-
եալ ծրագիր մը պատրաստելու հա-
մար Կ. Պոլսոյ բոլոր թաղապետական
շրջանակաց նախագահներէն բաղկաց-
եալ յանձնախումբ մը կազմուեցաւ .
քաղաքապետութեան պաշտօնարանը

կը հաւատեն թէ յանձնախումբ
բը մտադիր է քաղաքի տուններու
շինութեան արտօնութիւններ տալ,
այս պայմանաւ որ հաստատուն պա-
տերով բաժանեալ լինին .

Պաշտօնական ազդ. մը կը ծանու-
ցանէ թէ անուշադրութեամբ շուն
մը մեռցնող կառապանը պատժա-
կան տանին առջև պատասխանա-
տու չէ։ Հետեւաբար, ասկէ երկու
շաբաթ առաջ նոյն պարագային մէջ
բռնուած կառապանէն բնաւ տու-
գանք առնուած չէ, ինչպէս ֆար-
աիւ Պօսթօր ծանուցած և միւս լրա-
գիրք ալ անկէ առնելով դրած էին .

Փիլիպպէն եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ Արեւելեան Բու-
մէլին Ռուսական զօրքէ գրեթէ կա-
տարելապէս պարպուած է և միայն
երկու դունդ մնացած են։ Երբեմն
Արեւելեան Բումէլիի առժամանակեայ
կառավարիչ և նոյն նահանգը գը-
բաւող Ռուսական զօրաց ընդհանուր
հրամանատար Սիմօնիէն զօրավարը
կիրակի օրը Սիմօնիէն վառնա պիտի
երթար Պուլլարիոյ իշխանին ընդու-
նելութեան ժամանակ ներկայ դըր-
նուելու։ Արեւելեան Բումէլիի այլ և
այլ կողմերէն 20,000 էն աւելի Պուլ-
լարք նոյն նպատակաւ վառնա եր-
թալու պատրաստուած են։ Փիլիպպէի
ստիկանութեան վերապետէն, որ
Ռուս մ'է, իւր պաշտօնին մէջ վերա-
հաստատուեր է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ս Մ Ր Ո Ւ Մ Ո Ւ Մ Ւ Է	
Լրէի իրիւնց ոգուեցաւ	43.35
Այս առաւօտ բացուեցաւ	12.35
Հէս օրին	12.33
Բումբի երկրորդ	Ֆր. 46,
Թղթագրութ	Իր. 1200

ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՅՆ

21 Յունիս	
Անգլ. Իր.	109 46
Դարձիւն Կիւ	87 32
Իմէն Կիւ	90 4
Գլորիոյ	51 20
Մէճիպի տարրերու թիւն	6 23
Հիւնցոյ	44 41
Մէթալիք	45
Պրիմ	193

Ա. Զ. Գ. Ս. Յ. Ն.

Երէկ խառն ժողով հրաւիրուած
էր, բայց երկդեցական անդամաց
մեծագոյն մասին բացակայութեանը
պատճառաւ, Պատր. Փոխ. Իզմիրլեան
Դեր. Մատթէոս սրբադէսի նախա-
դահութեամբ Գաղաքական ժողովը
միայն նիստ կազմելով ինչ ինչ խնդ-
րոց կարգադրութեամբ զբաղեցաւ .
Կրօնական ժողովն իւր անդամաց
բացակայութեան պատճառաւ՝ այս
երկուշաբթի ալ չէ կրցեր նիստ ընել .

Հայրենիք լրագիրն իւր երէկուան
թուով կը ծանուցանէ թէ Բ. Դուռը
դեռ պահանջ ծանուցագրին վրայ Ուլ-
նիոյ նորընտիր Թուրք գաղմագամը
պաշտօնանկ ըրեր է .

Մամիկոնեան Մեծ. Մի. քայլէ Է-
ֆէնտին ազգային երեսփոխան ընտ-
րուեցաւ։ Պէյրօզի, Գանակիլի և
Ղալաթիոյ միացեալ թաղերուն կող-
մանէ .

Փիլիպպէի Աղդային ընդհանուր
ժողովին և Թաղական խորհրդոյ ան-
դամաց ստորագրութեամբ հետեւեալ
դոհութեան և շնորհակալաց ու-
ղերձը զրկուած լինելով Ս. Պատրի-
արք. հօր, մէկ պատճէն ալ մեղ զըր-
կուած է ի հրատարակութիւն .

Ամենապատիւ և Աստուծոյնով
Սրբազան Պատրիարք Կոստանդնու-
պոլսոյ և ամենայն Հայոց բնակիչոց
ի Տաճկաստան, Տեառն Տեառն Ներ-
սէսի Արհիմանդիտ և Տեառն Աղ-
դատէր վերակոչեցելի Արք. Եպիփան-
պոսի և բարեխնամ Հօր մերոյ Շնոր-
հաբախ Սուրբ Աջոյն մատչելիք ի
համար սրբիական խոնարհութեամբ .

Մեր անդամը Աղդային ընդհա-
նուր ժողովոյ Հայազգի բնակաց ի
Փիլիպպուպօլիս՝ յայտ առնեմք Ձե-
րումը Սրբազանութեան թէ որչափ
որ մեծ և խորին են մեր կարեկցու-
թեան վիշտերը, ընդ Ամենապատիւ մեր
ազգական ժողովրդէն, օտար և բազ-

մազգի, ժանտաժուտ, բարբարոս և
դաժան գրոհներու դժօխմբեր հա-
րըստահարութեանց ներքեւ տառապ-
եալ և ընկճեալ վիճակը, նոյնչափ
մեծ են մեր հիասքանչ և զարմանա-
լիառն շնորհակալիք առ Սրբազնու-
թիւն Ձեր, որ Մոսկէսի, Յետույ,
Սամուէլի, Եղիպի և այլ սուրբ և
Աստուծադրեցիկ Մարգարէից նա-
խանձայող ուղու վառեալ, վառն
զրկելոյն արգարութիւն ի զրկողաց
պահանջելոյ, ամենայն ջան, փայլի,
ինամբ, ի գործ եղեալ, վառեալ
դարման յանձնաձեւ և տալ դադա-
րեցուցանել այն նիւթական և բարո-
յապէս խոշտանգանաց բիւրաւոր
տառապանքները, որ թերեւ վառն
մեղաց մեր և երկնային թոյլտու-
թեամբ ծանրացեալ կան մեր Հայա-
տանի Աղգակցաց վերայ .

Գովելի և յաւիտեական երախտ-
եաց արժանի են արդարեւ Ձեր Սըր-
բազնութեան տիւ և գիշեր, անդու-
լ և անդադար, տաղանապաւ մտաց և
վշտակիւր սրտիւ, այս ամենայն չար-
եաց խաղաղման համար անխնայ հո-
գատարութիւններն, որք թէպէտ
արդիւնաւորութեամբ արդ. ևս չը
պսակեցան, և իրաց վիճակը և պա-
րագայից հանգամանքը վհատեցու-
ցել Երեւելով՝ Սրբազնութիւն Ձեր
ուրիշ Հովապետի մը յանձնել խոր-
հեցաք Պատրիարքական պաշտօնը .
սակայն ընդհանուր ազգն Հայոց և
նորա կեդրոնական ժողովն Ձեր Սըր-
բութեան առ աղգն ինքնանուէր,
անշահախնդիր և անկեղծ ծառայու-
թեանց յարգն վերստին և վերստին
ճանաչելով դարձեալ իմեց առ Սըր-
բազնութիւն Ձեր շարունակել այդ
տաժանակիր պաշտօնը, յուսալով
յԱստուած որ Ձեր վերապետութեան
օրով դադարին այն ամենայն տա-
ռապանք .

Ամենապատիւ ազգայնաց այս տխուր
օրին տեղի մեծ ցաւ և տրամու-
լիւն պատճառեն և յիշեցնեն մեզ
մեր նախնեաց քանի մը հարիւր տա-
րիներով առաջ այն վատանուն հա-
լածաց կողմէն կրած տառապանքը,
որք ստիպեցին զանոնք թողուլ զՀա-
յաստան դրախտանման, թողուլ ըզ
Հայրենիք ցանկալի, թողուլ ինչք,
արարք և ստացուածք, և դիմել
յօտարութիւն նժդեհ, պանդուխտ,
անինչ, անօգնական, և գաղթել այս
երկրներուն մէջ, ուր այժմ, մեք,
որդիք նոցա գտանիմք հեռի ի հայ-
րենեաց, մառացեալ մեծ մասամբ
զբաղըրալուր ըզրուն և զաւանդական
սովորութիւն ազգիս Հայոց, յորմէ
շնորհիւն Աստուծոյ անբաժանելի
կամք միայն ի ձեռն Սրբոյ և Լու-
սաւորչական հաւատոյ մեր .

Աղդ. ընդհանուր ազգին զգաց-
մանց մեք ևս համակիր, համարձա-
կիմք աղերսել Ձեր Սրբազնութեան
որ շարունակէք Ձեր հովապետա-
կան պաշտօնը. և թէպէտ ծանուէր
ի ներքուստ, և դադանաժառուկ
չնչին խարդաւանք, և ծանուէր ար-
տաքուստ ներութիւն բազում վիշ-
տըս յաւելուն ի վերայ վշտաց, այլ
գուք պարտիք, ո՛վ Սրբազան Հայր,
արհամարհանօք առաքուր կոխել
այն ամենք, և ի Մեծն Ներսէսէն ըս-
կեալ մինչ ի Ներսէս Ե. երեւելի
հանդիսացեալ նախորդ. Սրբազան
հարց առաքելաշաւիղ հետոյն հե-
ռուելով, Դուք նոցա անուանակիր,
նոր և Մեծ Ներսէս հանդիսանայք ի
փառս Ասքանաղեան սոհմիս, հով-
ւէք Ձեր արթուն խնամոց յանձնեալ
ժողովուրդն .

Որոց ի թիւս և մեր լինելով ա-
զաչեմք զՍրբութիւն Ձեր, ինչեւ
յատուածահանոց յաղթի Ձեր զԱ-
րեւելեան Եւրոպիոյ Հայ բնակիչքս,

զոր Զեր այցելութեամբ պատուեալ
և Զեր եռանդաբար և անդամակ
քարոզութեամբ խորհրդակցելէ ք
բազմաթիւ յապաքանութիւն և այժմ
իւր այս նոր վիճակին մէջ աւելի
պէտք զգայ հոգեւորական բարեկար
գութեանց և յուսայ իւր այս իղձե
րուն ի մտոյ կատարումը Զեր բար
ձր ուղղադատ և արդարաւիշ հո
մանաւորութեան :

24/5 մարտ 1879 Մամբ
Փիլիպէ Ամենապատիւ Սրբազան
Հորդ մեր յետին և ամե
նախնարհ ծառայք
(Սրբաբարձրութեան)

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Տրապիզոն, 14 յունիս 1879

Խմբագիր Տէր .

Այս անգամ Կիրասոնէն երկու ճանա
պարհորդք շատ տխուր կը նկարագրեն
տեղւոյն քրիստոնէից վիճակը , որք թէ
նախապաշարեալ և մոլեռանդ ամբողջ
և թէ՛ կառավարութեան մի քանի ան
գամներէն հաւատարմութիւն հարստա
րութիւն կը կրեն , այնչափ որ խաւան
աչքին իբր սորուկ նկատուած են և Հե
տեան իրողութիւնները չափէն աւելի
կը հաստատեն ըսածներս : Հայ վարժա
պետ մը իւր ընկերին հետ ծովափերը
պտտած տեսնէ ինչպէս կ'ըլլայ՝ Տոմիկ
պատանիքի մը կը գալի , պատանին է
կը բարկանայ և կը դառնայ ծեծել վար
ժապետը , որ հոգիւ փախելով կ'ազատի
տառապանքէրէն ծայն հանելու կամ ինք
զինք պաշտպանելու : Սակայն , խմբագիր
Տէր , ըստ իս վարժապետը Տոմիկ պա
տանիէն աւելի յանցաւոր է , որ վատու
թեամբ կերեր է ծեծել՝ առանց երբեք
անձին պաշտպանութեան փորձ ո' ընելու :
Այդպիսի վարժապետ մը սորուկներէ
դատ ուրիշ բան կրնայ սորվեցնել . վա՛յ
մեր գլխուն եթէ մեր ապագայն այդպի
սինքն պիտի պատրաստեն : Կիրասոնի
Յունաց առաջնորդական փորձաբարձ
հանայն այժմ քաղաքն է և դատ քացած
է Կիրասոնի Գաղթին դէմ որ զինք ա
նարպանօք և բռնութեամբ դուրս վաճը
նած է իւր քովէն միայն քանի մը Յոյ
ներու գործը փութով տեսնելու բարե
խօսեալն համար : Ուրիշ օրինակներ քը
րիստոնէից հարստաշարութեան : Կիրա
սոնի բոլոր մտավաճառները խալա՛ւ են .
ուստի երբ միս կը մորթուի , նախ Տոմիկ
ները կ'առնուն հաւանա՛ծ կտորներին և
քրիստոնէայ մը բնաւ համարձակէր մե
տենալ սպանդանոցին մինչև որ Տոմիկը
ետ չքաղուին . ասոր հակառակ , երբ մի
սերը լաւ չեն ելներ , այն տանն մտալա
ճառք կը հրաւիրեն քրիստոնէայի որ
գտն առնուն , որք չեն կրնար մերժել
անոնց առաջարկը : Ասկէ աւելի դարձա
նայնի կայ : Կիրասոնի մէջ քրիստոնէայք
կով չեն կարող ունենալ . այդ առանձ
նաշնորթութիւնը խալմանքուն է միայն :
Աստիք թերեւ անհաւատալի երևին Մա
սիսի ընթերցողաց , ինչպէս ինձ ևս ե
րեցան , սակայն հաղորդողին հաւատար
մութեան վրայ կատարուելու բնաւ իրա
ւունք չունին : Այս իրողութիւններն ե
թէ՛ մէկ կողմէն խալմանց մոլեռանդու
թիւնը կ'ապացուցանեն , միւս կողմէն ալ
քրիստոնէից անհոգութիւնը կամ լաւ ևս
անզգայութիւնը ակներև կը ցուցնեն ,
որք իրենց արդար բողոքները չեն ներ
կայեր առ որ անկ է իրենց վիճակին
բարեօրոյն համար : Բաղդատամբ Կի
րասոնի քաղաքին քրիստոնէայք անհա
մուստ աւելի հանդիսա են : Ընդհանուր
կառավարիչ Վսեմ Սըրբի փաշան զգու
շութիւնները կրկնապատկած է , որոց
չնորհիւ անգործութիւնը կը տրիք քաղա
քին մէջ և չըմպակները : Երեսուն և հինգ
օրէ ի վեր սաստիկ խտտութիւն կայ ան
ցողորմութեան , մինչև իսկ ընտանիք
ներ ետ ճանրուեցան ձեռքերնին անցա
ղիւր չունենալուն համար : Կերեայ թէ
այս միջոցը բաւական չա՛հ կը բերէ գան
ձուն : Գաւառիս առաջնորդ Գեր Մատ
թիէս եպիսկոպոս ամայս 12ին մեկնեցաւ
ի Կիւմուքլիսան : Այն տեղի եկեղեցին ալ

օծելու համար : Քաղաքին Կերեանկան
վարժարանի քննութիւնները կատարուե
լու վրայ են այժմ : Սակայն աշակերտաց
մեծագոյն մասն արդէն բացակայ են՝
գեղերը գացած ըլլալուն համար : Այս
տեղ վարժարանը տարին երեք ամիս դոց
կը մնայ գիւղաքնացութեան պատճառաւ .
ուստի երեւելի արդիւնք մը յառա՛ծ չգա
լուն պատճառներէն մին ալ այս է , ո
րուն վրայ երկար խօսիլը ուրիշ առթիւ կը
թողուի :

Զեր ընթերցողներէն Գ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՇԻՐԻԹԻՍ—ԽԱՅՐԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԻՃԱԿԸ ԲՆՆՈՂ ԶԱՆՁԱԽԱՄԻՆ

Ա. Ո.

ՎՍԵՄ. ՆԼ.ՎՏԻՍ. ՓԱՇԱ

ՆԱԽԱՐԱՐ ԱՌԵՆՏԻՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ

Վսեմապաշտ Տէր .

Զեր վսեմութեան կողմէ մեզ յանձ
նուած պաշտօնը կատարելու համար
Շիրքէթի—խայրիկի ընկերութեան
պաշտօնատունը գումարուելով չորս
նիստ բլրին , մայիս 20, 24, 30 ին և
յունիս 3ին , և ահաւասիկ մեր աշ
խատութեան արդիւնքը :

Մեր առաջին փոյթին եղաւ ու
սուսնասերէն և հաստատել թէ Շիր
քէթի—խայրիկի շտգնաւուց գոր
ծառութեան , պահպանութեան և
նորոգութեանց համար ինչ գումար
յատկայնել կը վայելէ : Վերջին ութ
տարիներուն ընդհանուր ծախուց
հաշիւները քննեցինք , և իրարու հետ
բաղդատելով՝ ծախուց գումարը
վարչութեան անցեալ փորձերով նե
րելի եղած ամենէն ստորին գումա
րին իջուցինք :

Ցուելով ստուգեցինք որ ընկե
րութիւնը , փոխանակ ուրիշ ընկե
րութեանց պէս իւր առաջին տա
րիէն ապահովութեան , պահպանութե
ան , նախապահութեան և նիւթոց հնաց
ման գումարներ որոշելու , որով այ
սոր հզօր և ամրապնդ վիճակ մը
կունենար , իւր հասութիւն բոլոր
գումար մասը նոր շտգնաւուց գնելու
գործածել է , և այսպէս կենաց տա
րերէն զուրկ մնալով , վերջին երկու
տարիներուն մէջ նոր թղթադրամին
անկումէն յառա՛ծ եկած տագնապը
սարսափելի կերպիւ զինքը ցնցեր է ,
որովհետեւ յիշեալ երկու տարիներ
ուն հաշուեկիւն 17,804 իրացի և
58 դրուշի բաց մը կը ներկայէ :

Արդ ընկերութեան մինչև այսօր
պահպանած՝ բայց անհրաժեշտ եղած
հաստատութիւնը տալու համար ,
որպէս զի ամեն տեսակ ապագայ պա
տահականութեանց կարենայ դի
մանալ , պարտ համարեցանք խոր
հուրդ տալ վարչութեան , որ վերը
յիշուած այլ և այլ գումարներն իւր
հաշուակալութեան մէջ ընդունի , որոց
համար պարտաւորեցանք նախատե
սութիւններ ընել ծախուց հաշուե
ցոյցին մէջ :

Ասկէ երկու տարի առաջ վար
չութեան խնամք ընկերութեան բո
լոր շտգնաւուցուն և այլ ամեն գո
րից արժէքն որոշուելով շինուած
հաշուեցուցակին համեմատ ընկերու
թեան գումարաւորին համար տրուե
լիք տոկոսին ու շահուն գումարը՝
տեղութեան օրինական սակագնոյն
համեմատ որոշեցինք , և այսպէս ըն
կերութեան ընդհանուր ծախուց տա
րեկան գումարն 137,781 Օսմ. իրա
ւ վախճուն զրչի ելաւ :

Կանխատեսական պիւտճէին հա
սոյթները՝ վերջին երեք տարիներ
ուն մէջ Շիրքէթի շտգնաւուցով
ուղեւորութիւն ընդունելուն միջին
թուոյն վրայ հիմնելով և այժմուս սա

կադինն՝ բայց մէծիտիւն վրայ հաշ
ուելով և 103 դրչէն սակի վերածե
լով , 120,600 Օսմ. իրաւ արտադրե
ցին , որ է 17,181 իրաւ և 60 դրուշ
պակաս ծախուց գումարէն :

Երբ բաղդատական հաշուով
յայտնի եղաւ , որ մինչև իսկ ներկայ
սակագինը պղնձի տեղ մէծիտիւն վե
րածելով , ընկերութիւնը չպիտի կըր
նայ յարասեւ ապրելու վիճակի մէջ
դանաւիլ , ինչպէս որ կը վայել այն
ամեն ընկերութեան՝ որ իւր ապա
գայն կը հոգայ և միանգամայն իւր
բաժանորդաց շահերը պաշտպանել
կուղէ . վերջապէս յայտնի եղաւ որ
ընկերութիւնը ներկայ սակագինը չը
պակսեցնելէ դատ՝ անցագիններն ա
ւելցնելու իրաւունք ունի :

Սակայն խորհեցանք թէ ինչ ար
տաքոյ կարգի միջոցներ գտնելու է ,
որպէս զի կարելի լինի մէկ կողմէ
հաստատութիւնը դո՛հ ընել , որ դի
ներուն նուազումը կը խնդրէ առանց
իրաւանց , և միւս կողմէ ընկերու
թեան գոյութիւնը պահպանել , որոյ
շահերն համարաշիւ պէտք է համար
ւին Պոսթօրի եղբրքը բնակող և եր
թեւեղ հաստատութեան շահուց ,
զիւրահասանալի պատճառներով :

Հասոյթներուն համար վերջապէս
մեր նախատեսութիւնը վերջին պա
տերադրմին նախընթաց երեք տարի
ներուն միջին հաշուոյն վրայ հիմնե
ցինք իբրեւ յաջող և կանոնաւոր տա
րիներու :

Իսկ ծախուց համար , նախատե
սական պիւտճէին մէջէն՝ մեր համը
մանց հակառակ՝ զեղչեցինք ապահո
ւութեան պահպանութեան և նախատեսու
թեան գումարներն , ընկերութեան
գոյլից ցուցակին կամ գումարաւորին
յատկանալիք տոկոսն հարկւրին 6ի
իջուցինք , նմանապէս նիւթոց հնաց
ման յատկանալիք գումարն ալ 8000
էն 4000 իրացի իջուցինք :

Այսպէս ընդ ամենը 21,129 իրաւ
և 60 դրչի զեղչեցինք՝ 137,781 իրաւ և
60 դրչի համող պիւտճէին , զոր նա
խապէս հարկաւոր գումար էինք ըն
կերութեան կանոնաւոր ընթացքն
ամեն պատահականութեանց դէմ
ապահովելու համար : Ուրիշ կերպ
խօսելով , գերթէ հարկւրին 13 զեղչ
մ'ըրինք , այնչափ միայն թողով ըն
կերութեան , ինչ որ ճշդիւ հարկա
ւոր է ժամանակ մ'երթալու համար ,
մինչև որ տեղական պարագաները
ներեն ընկերութեան կանոնաւորա
պէս զարգացման համար բացարձա
կապէս հարկաւոր եղած յաւելումն
ընել սակագինն վրայ :

Մինչև այն ժամանակ պէտք է
որ իւր հասութիւն հետզհետեւ աւել
նայէն սպասէ վերը յիշուած այլ և
այլ նախատեսական գումարներն հայ
թայթելու և իւր բաժանորդաց որ
և է շահ բաշխելու հնարաւորու
թիւնը :

Նմանապէս ջանացինք շահուց
վրայ ալ զեղչ ընել , բայց երկար և
մանրախոյզ քննութիւններէ և վիճա
բանութիւններէ ետեւ , որք մեր ե
րեք վերջին նիստերը գումարեցին ,
համեմատեալութեամբ ճանչեցինք թէ
զեղչելէ քան մը չկար :

Հանրաժողովն ալիող տարւոյ
մ'ապառման համար խանուցեալ ա
մենէն վար գնով հաշիւ եղաւ : 21
500 թոնօի չափ հանքածուխ՝ իւրա
քանիւր թոնօն 23/66ն՝ ամեն ծախք
ի միասին՝ 30,000 իրաւ հաշիւ եղաւ
5300 աւուրց սպառման համար :

Ընկերութեան պաշտօնէից և գոր
ծակալաց ամսականներն , որք ասկէ
տասնութիւն տարի առաջ ապրուս
տին աժառն եղած ժամանակ որոշու
էին խիստ չափաւոր կերպիւ , կարե
լի չաւանք պակսեցնել : Ընդհակա

ռակն՝ յայտարարեցինք թէ արդա
րութիւն չէր՝ ո՛չ հասարակութեան
և ո՛չ բաժանորդաց շահուն համար՝
ընկերութեան պաշտօնէից ամսականը
զեղչել , որք պարկեշտօրէն ապրելու
համար պէտք եղած կերպիւ ամսա
կան ստանալու իրաւունք ունին . և
թէ գործակալներէն շատերուն ամ
սականն աւելցնել իսկ արժան էր :

Այսպէս ահա պարտք համարե
ցանք հինգ հարկւրի չափ՝ մեծ մա
սամբ որդւոյ և ընտանեաց տէր և
երկար տարիներէ ի վեր ծառայող
պաշտօնէից և գործակալաց ամսա
կաններուն գումարն 38,000 Օսմ. իւ
րա պահել , որ գումարական տագնա
պէն առաջ վճարուած գումարն է :

Միայնակ հեղեղ լուսն

Կ. Պոլիս 18 յունիս 1879

. . . Խմբագրապետ Էֆէնտի .

Բարեհաճեցէք հետեւեալ երկուող
դրութիւնը Զեր պատուական թեր
թի միջոցաւ հրատարակել , կանխա
ընդունելով մեր խորին շնորհակալքը :

Բերկրութեամբ կըմանուցանենք
թէ Կիւմուքլի ընկերութեան գործա
դիր Ժողովն ընդունեցաւ Մեծ Մը
կըրտի Էֆէնտի Գալթիէնի կող
մանէ 182 հատոր գիրք , որոց մէջ 120
օրինակ «Նոր Օսմանի բամպակի մը
չափութիւն» , 50 օրինակ «Խորհրդա
ծութիւն» Բաղդալայ , և 12 օրինակ
«Իրաւունք աղբայր» անուն գրքերէն :

Նոյնպէս Ասիական ընկերութեան
կողմանէ ընդունեցաւ 40 հատ «Խոր
հուրդք հանդիսի Արարչադորձու
թեան Աստուծոյ» անուն գրքոյիէն :

Գործադիր Ժողովն պատիւ կը
համարի ի գիտաց Կիւմուքլի ընկերու
թեան իւր խորին շնորհակալքն
յայտնել հրատարակալ թէ՛ աղգա
սեր յիշեալ Էֆէնտիին որ գիտէ սա
տարել աղբօգուտ ձեռնարկութեանց
և թէ՛ Ասիական բարենպաստ ըն
կերութեան որ ներկայ չըմանիս մէջ
կրկին անգամ ըլլալով ընկերութեան
ձեռնառու և նպատաստնոյց կը հան
դիսանայ :

Դիւան Գործադիր Ժողովոյ
Ատենագիր Ստենագրատ
Տ. Առաքելեան Արաքէլ Թափաշեան

17 յունիս 1879 իւսկիւտար

. . . Խմբագիր ,

Խնդրեմք յետագայ հրատարակի
րը Զեր պատուական լրագրոյն մի
ջոցաւ հրատարակել Բարեհաճիք :

Հայուհեաց Աղբանուէր ընկերու
թեան ընդհ. Ժողովն արտապիկ կար
գի նիստ ունի յառաջիկայ ուրբաթ
յունիս 22 , Սէլամիէ փողոց , Գիւրք
ճի պաշիի տունը :

Կը հրաւիրեմք բոլոր անդամա
կից տիկնայք և օրիորդք բարեհաճին
ի ժամ 7 ներկայ գտնուիլ նախական
պարտաւորութիւն մի կատարելու ,
զոր ստանձնած են ազգասիրաբար :

Մամբ յարգ անօք
Ատենագիր Ստենագրատ
Զուգէլ Խանճեան Եւսեփէ Սէլեմեան

ՕՐԱՆԱՐԳ

1. Ընթերցումն նախորդ նստի ա
տենագրութեան ,
2. Ընթերցումն դիւանական թղթ
թակցութեան ,
3. Գատը գիւղի Տիկնայց և Օրիոր
դաց ընկերութեան կողմանէ ա
ռաջարկութիւն միայման և
պայմանք ,
4. Երագիր ներքին կանոնագրու
թեան ,
5. Հրաժարում Բ. Ատենագրատի
Ընդհանուր Ժողովոյ :

